ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորաբաց, 61855, norabats.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 1

ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջով.

ավագանին որոշում է.

Հաստատել Նորաբաց համայնքի թիվ 1 նիստի հետևյալ օրակարգը.

1.ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ.ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ 06.11.2016ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 38-Ն ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3.ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4.ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5.ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6.ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7.«ՆՈՐԱԲԱՑԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՌԱՊԵՍ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԵՎ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ՉՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՊԵԼՅԱՆ ՎՐԵԺ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ
4. ԹԱԹՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ
5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԻՐԱՆ
7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԴԱՎԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորաբաց, 61855, norabats.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 2-Ն

ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով.

ավագանին որոշում է.

Հաստատել Նորաբաց համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագիրը համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՊԵԼՅԱՆ ՎՐԵԺ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ
4. ԹԱԹՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ
5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԻՐԱՆ
7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՂԱՁԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորաբաց, 61855, norabats.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 3

ՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ 06.11.2016ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 38-Ն ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի պահանջով.

ավագանին որոշում է.

Անվավեր ճանաչել նորաբաց համայնքի ավագանու 06.11.2016թվականի թիվ 38-Ն որոշումը՝ Նորաբաց համայնքի տարածքում 2017թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՊԵԼՅԱՆ ՎՐԵԺ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ
4. ԹԱԹՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ
5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԻՐԱՆ
7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՂԱՁԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՍՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորաբաց համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորաբաց, 61855, norabats.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 4-Ն

ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջով.

ավագանին որոշում է.

1.Նորաբաց համայնքում 2017թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը:

1/Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության /տեղադրման/ /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար.

Հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա/ մինչև 300քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500դրամ.

բ.սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

-201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000դրամ.

-501-ից մինչև 1000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000դրամ.

-1001-ից մինչև 3000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների

-3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000դրամ.

գ.ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

-մինչև 20քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500դրամ.

-20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500դրամ:

2/համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման վերականգման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/չի նախատեսվում կցալառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500դրամ.

բ.բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգման կամ արդիանացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ.նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ի մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3/Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար՝ 2500դրամ.

4/համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի փույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ 200000դրամ.

5/համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝

6/համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝50000դրամ.

7/համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա/ ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսակի համար՝

-մինչև 26քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000դրամ.

-26-ից մինչև 50քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000դրամ.

-51-ից մինչև 100քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝6500դրամ.

-101-ից մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000դրամ.

-201-ից մինչև 500քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝12500դրամ.

-501և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22500դրամ.

բ.ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսակի համար՝

-մինչև 26քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000դրամ.

-26-ից մինչև 50քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000դրամ.

-51-ից մինչև 100քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6500դրամ.

-101-ից մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերեսունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝10000դրամ.

-201-ից մինչև 500քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12500դրամ.

-501և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22500դրամ.

[illegible] և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում

9/համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին /սաունաներին/ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.

ա.առևտրի օբյեկտների համար՝ 5000դրամ.
բ.հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 25000դրամ.
գ.բաղնիքների /սաունաների/ համար՝ 200000դրամ.
դ.խաղատների համար՝ 500000դրամ.
ե.շահումով խաղերի համար՝ 250000դրամ.
զ.վիճակախաղերի համար՝100000դրամ.

10/համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը հյուրաքանչյուր եռամսակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

-մինչև 26քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000դրամ.

-26-ից մինչև 50քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝2500դրամ.

-51-ից մինչև 100քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝5000դրամ.

-101-ից մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500դրամ.

-201-ից մինչև 500քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 10000դրամ.

-501և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 15000դրամ.

բ.ոչ հիմնական շինությունների ներսում՝

-մինչև 26քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 100դրամ.

-26-ից մինչև 50քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝500դրամ.

-51-ից մինչև 100քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝1000դրամ.

-101-ից մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի

-201-ից մինչև 500քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000դրամ.

-501և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500դրամ.

11/ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա.ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2000դրամ.

բ.թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝3500դրամ.

գ.սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ.

դ.այլ արտաքին գովազդի համար՝1500դրամ.

ե.դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով՝375դրամ.

զ.եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու համար սահմանված տուրքի 10%-ի չափով՝ 150դրամ.

12/համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար,օրացույցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10000դրամ.

13/համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ 500000դրամ:

14/համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝

ա.3հա-ից մինչև 5հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.500000դրամ.
բ.5հա-ից մինչև 7հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000դրամ.
գ.7հա-ից մինչև 10հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝7000000դրամ.
դ.10հա-ից ավելի մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000դրամ

2.Սույն հոդվածով սահմանված դրույքաչափերը համայնքի ավագանու որոշմամբ հաշվարկվել 0.5գործակիցի կիրառմամբ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1/համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման

հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000դրամ.

2/ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների /այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000դրամ.

3/ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000դրամ.

4/ համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 20000դրամ.

5/համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000դրամ.

6/ համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար՝ մ փաստաթղթի համար 200դրամ.

7/համայնքապետարանի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ համայնքում բնակ վող յուրաքանչյուր բնակչի համար ամսեկան աղբահանության վճար սահմանել՝ 10դրամ.

8/սպասարկում իրականացնող կազմակերպությունների համար ամսեկան վճար սահմանել 200դրամ.

9/շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար համայնքապետ ռանի կողմից տրամադրվող փույլտվության վճար սահմանել.

-ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 500դրամ.

-ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 1000դրամ

10/Ընթացիկ տարվա համար տեղական վճարի դրույքաչափի փոփոխություն չի կարող կատարվել:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՊԵԼՅԱՆ ՎՐԵԺ

2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇ

3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ

4. ԹԱԹՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ

6. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԻՐԱՆ

7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՂԱԶԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՍՏՅԱՆ